# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 , ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

03/26-1/13555-17
25.07.17թ.

ՀՀ ԿԱ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ
ՊԱՐՈՆ ԱՆՈՒԲԱՂ ՀԱՄԲԱՐՅԱՆԻՆ

ՄՈՒՏՔ ԹԻՎ 2882
«24» 07 2017թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՈՒՏՔ ԹԻՎ 4956
«26» 07 2017թ.

Հարգելի պարոն Համբարյան

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ կարգ) 106-րդ կետի՝ «CLIENT-TRESUARY»-«LSFinance» (ԳԳՕ) համակարգ (այսուհետ՝ համակարգ) մուտքագրված տվյալների հաշվառման արդյունքում արձանագրվել է հետևյալը.

1. ՀՀ ԿԱ ՈՁ ԳՀԱՊՁԲ-17/11/ԱԲ/3/ԿԾ ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստը 14.06.17թ. հրապարակվել է միայն www.armeps.am կայքում, այնինչ ՀՀ կառավարության 06.04.17թ. թիվ 386-Ն որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետի համաձայն վերջիններս նույն օրը պետք է հրապարակվեին նաև տեղեկագրում:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոհիշյալ ընթացակարգի վերաբերյալ կայքում հրապարակված չեն գնահատող հանձնաժողովի անդամների և քարտուղարի կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին, իրական շահառուների (սեփականատերերի) մասին հայտարարությունները և գնահատման նիստի արձանագրությունը:

2. 16.06.17թ. հայտարարված ՀՀ ԿԱ ՈՁ ԳՀԱՊՁԲ-17/12/ԱԲ/4/ԿԾ ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի արդյունքում <Պատրոն ՌՄ> ՍՊԸ-ի հետ 12.07.17թ. կնքվել է թիվ ՀՀ ԿԱ ՈՁ ԳՀԱՊՁԲ-17/12/ԱԲ/4/ԿԾ/55

պայմանագիրը, սակայն տեկեկագրում հրապարակված չեն իրական շահառուների (սեփականատերերի) մասին հայտարարությունները և գնահատման նիստի արձանագրությունը, իսկ պայմանագրում ներառված չէ կարգի 33-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված պարտադիր դրույթը:

3. 09.06.17թ. հայտարարված ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-17/6/ԱԲ/1/ԱԾ ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի արդյունքում <Հայկ Գալստյան> ԱՁ-ի, <ԱԲԻ> ՍՊԸ-ի, <Ժակ և Գոռ> ՍՊԸ-ի և <Մոսեսքո> ՍՊԸ-ի հետ 12.07.17թ. կնքվել է համապատասխանաբար թիվ ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-17/6/ԱԲ/1/ԱԾ/50, ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-17/6/ԱԲ/1/ԱԾ/51, ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-17/6/ԱԲ/1/ԱԾ/52 և ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-17/6/ԱԲ/1/ԱԾ/53 պայմանագրերը, սակայն տեղեկագրում հրապարակված չեն գնահատող հանձնաժողովի անդամների և քարտուղարի կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին, իրական շահառուների (սեփականատերերի) մասին հայտարարությունները և գնահատման նիստի արձանագրությունը:

Ինչպես նաև հայտնում ենք, որ <ԱԲԻ> ՍՊԸ-ի և <ՄՈՍԵՍՔՈ> ՍՊԸ-ի հետ կնքվել են վերոհիշյալ պայմանագրերը, այնինչ վերջիններիս կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում էլեկտրոնային թվային ստորագրությունները տեսանելի չեն, ինչը նախատեսված է հրավերի 8.19 կետով:

4. 13.06.17թ. հայտարարված ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-17/8/ԱԲ/ԿԾ ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի արդյունքում <Պատրոն ՌՄ> ՍՊԸ-ի և <Կոմպմարկետ> ՍՊԸ-ի հետ 13.07.07թ. կնքվել են համապատասխանաբար թիվ ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-17/8/ԱԲ/ԿԾ/57 և ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-17/8/ԱԲ/ԿԾ/58 պայմանագրերը, սակայն կայքում հրապարակված չեն գնահատող հանձնաժողովի անդամների և քարտուղարի կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին, իրական շահառուների (սեփականատերերի) մասին հայտարարությունները և գնահատման նիստի արձանագրությունը:

Միաժամանակ հայատնում ենք, որ վերոհիշյալ ՍՊԸ-ների հետ կնքված պայմանագրերում ներառված չեն կարգի 33-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված պարտադիր դրույթը:

5. <Կոմպմարկետ> ՍՊԸ-ի հետ 13.07.17թ., <Էկոմիքս> ՍՊԸ-ի հետ 12.07.17թ. և 13.07.17թ. կնքված համապատասխանաբար թիվ ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-17/8/ԱԲ/ԿԾ/58, թիվ ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-17/11/ԱԿ/4/ԿՇԾ/54 և թիվ ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-17/11/ԱԲ/3/ԿԾ/56

պայմանագրերը համակարգ և պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության մոդուլում մուտքագրվել են CPV-ի կոդերի տարբեր հերթական համարներով:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է ՀՀ ֆինանսների նախարարի 01.04.15թ. թիվ 181-Ն հրամանի N2 հավելվածով հաստատված կարգին համապատասխան ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել պարզաբանում՝ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆ

*Կատ. պետական գնումների գործընթացի*
*համակարգման վարչություն*
*Հեռ. 011800261*